ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 9

«ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայություններ ձեռք բերելու նպատակով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք.Աբովյան

07/12/2023թ.
ժամը 10:00

Մասնակցում էին՝
Գնահատող հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Զոբանյան
Անդամներ՝ Լ. Իսահակյան, Գ. Խաչատրյան, Լ. Շառաջյան
Քարտուղար՝ Ա. Թադևոսյան

Պատվիրատուն՝ Աբովյանի համայնքապետարանը, որը գտնվում է ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր. 1 հասցեում, ստորև ներկայացնում է «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով գնման ընթացակարգի նիստի մասին համառոտ տեղեկատվություն:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված N 1-ի 32-րդ կետի 25-րդ ենթակետով սահմանված հիմնավորումներ չեն ստացվել:

Գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն հրավերի վերաբերյալ ստացվել են հարցումներ, որոնց սահմանված ժամկետներում տրվել են պատասխաններ:

Գնումների մասին ՀՀ օրենքի 4-րդ ենթակետի համաձայն հրավերում կատարվել են փոփոխություններ:

1. **«ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով էլեկտրոնային աճուրդով ընթացակարգի մասին (Ա. Զոբանյան)**

Հայտերը պետք է բացվեն էլեկտրոնային գնումների e-AUCTION(https://eauction.armeps.am/ կայքի) համակարգի միջոցով 2023 թվականի դեկտեմբերի 12-ին, ժամը 11:00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ-4, դեմ-0:

2. **Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին (Ա. Զոբանյան)**

Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով Աբովյանի համայնքապետարանի կողմից հրապարակված «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների կողմից ստացվել են մի շարք հարցումներ և առաջարկություններ:

Պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ ստացված հարցումների և առաջարկությունների բովանդակության առավել մանրամասն և մասնագիտական ուսումնասիրություն իրականացնելու, հետագա ռիսկերից, տարընթերցումներից և տարըմբռնումներից խուսափելու, գնման ընթացակարգին մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման ընթացակարգի համար համայնքի բյուջեից նախատեսվող ծախսերն առավել արդյունավետ և նպատակային օգտագործելու համար «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել Աբովյան համայնքի ավագանուն Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու առաջարկով, համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի հավելված N 1-ի 58-րդ կետի հիման վրա, այն է. պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա:

Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի նախագահ՝		Ա. Զոբանյան
Անդամներ՝		Լ. Իսահակյան
		Լ. Շառաջյան
		Գ. Խաչատրյան
Համակարգող		Ա. Թադևոսյան